

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**ԱՐԻՍՏԱԿԷՍ ԼԱՍՏԻՎԵՐՅՈՒ «ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ԳՐԱԲԱՐ ԵՒ
ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԲՆԱԳՐԵՐԻ ԲԱՌ-ԱՊԱՇԱՐԸ**

Միջնադարեան հայ մատենագրութեան ինքնօրինակ դէմքերից մէկը՝ Արիստակէս Լաստիվերցին, ապրել եւ ստեղծագործել է տասնմէկերորդ դարում՝ հայ ժողովրդի համար բարգաւոյն ու դժնի շրջանում: Նրա «Պատմութեան» հենքը 988-1074 թթ. Հայաստանի իրավիճակի նկարագրութիւնն է, պայքարը ինքնուրոյնութեան եւ ազատութեան համար: Այս շրջանում Բիւզանդիան յամառօրէն ձգտում էր դէպի արեւելք՝ նուաճելու Հայաստանն ու Վրաստանը: Դեռեւս 949 թ. կայսրութիւնը գրաւեց Կարին քաղաքը, իսկ 966-7 թ. Բիւզանդիային բռնակցուեց Տարօնը: 1000 թ.-ին Դաւիթ Կիւրոպաղատի մահուան լուրից յետոյ Վասիլ II-ը աճապարեց գրաւել Տայքը: Կիւրոպաղատը ժառանգ չունէր, ուստի Վասիլ II-ի ճնշման ներքոյ Տայքը կտակուեց Բիւզանդիային. 1016-1021 թթ. արշաւանքների եւ բիւզանդական նուաճողական քաղաքականութեան հետեւանքով Սենեքերիմ Արծրունին 1021-22 թթ. իշխանութիւնը յանձնում է Վասիլ II-ին: Բիւզանդիային է յանձնում Անին: Գագիկ II-ը խաբէութեամբ կանչում է Կ. Պոլիս: 1045 թ. Կոստանդին Մոնոմախը բռնի ուժով գրաւում է Անին: Բայց Հայաստանի միակ հակառակորդը Բիւզանդիան չէր: Դեռեւս X դարի 30-ական թուականներին Ատրպատականում իշխանութիւն կազմած վաչկատուն, խուժուղուժ դելմիկները բազմիցս ասպատակում էին Վասպուրականը:

Հէնց այս բարդ ու օրհասական շրջանում է ապրել ու ստեղծագործել Արիստակէս Լաստիվերցին: Այս յօդուածում զուգադրահամեմատութեան հիմքի վրայ քննել ենք Լաստիվերցու «Պատմութեան» բնագրի եւ թարգմանութեան բառապաշարային ընդհանրութիւնները եւ տարբերութիւնները՝ բացայայտելով գրաբարից արդի արեւելահայերէն թարգմանական աշխատանքի իւրայատկութիւնները:

Յօդուածը հիմնուած է վենետիկեան (1844 թ.) եւ երեւանեան (1968 թ.) հրատարակութիւնների համադրմամբ¹ 1971 թուականին կատարուած արեւելահայերէն թարգմանութեան վրայ: Թարգմանիչը վաստակաշատ լեզուաբան, գրաբարագէտ, գրող, բանասիրական գիտութիւնների թեկնածու, փրոֆեսոր Վազգէն Ասքանազի Գէորգեանն է: Մինչ կեանքի վերջը նա գրաբար է դասաւանդել ԵՊՀ հայոց լեզուի պատմութեան ամպիոնում: Գէորգեանը յայտնի է նաեւ իր բանասիրական, բանաստեղծական-թարգմանչական գործունէութեամբ:

Այժմ յաջորդիւ անդրադառնանք Արիստակէս Լաստիվերցու «Պատմութեան» բնագրի նորաբանութիւններին, դարձուածքների եւ յարադրութիւնների զուգադրահամեմատական վերլուծութեանը:

Նորակազմութիւնները կամ նորաբանութիւնները բառապաշարի այն միաւորներն են, որոնք ստեղծուում են որեւէ հեղինակի կամ նրա թարգմանչի կողմից՝ արտայայտելու համար նոր առարկաներ, երեւոյթներ եւ հասկացութիւններ, կամ հին, արդէն

¹ Արիստակէս Լաստիվերցի, Պատմութիւն, Երեւան, 1971, էջ 14:

ծանօթ երեւոյթները նորովի բնութագրելու համար: Նոր բառերը ստեղծուում են լեզուում արդէն գործող արմատների, ածանցների տարբեր զուգակցումներով կամ դրանց վերամաստաւորմամբ: Այսպիսի բառերը ժամանակի ընթացքում կա՛մ համընդհանուր գործածութիւն են ձեռք բերում՝ ամրակայուելով գրական լեզուի բառարաններում, կա՛մ մնում են իբրեւ նորագիւտ դիպուածային միաւորներ՝ վկայուած միայն առանձին հեղինակի կամ ստեղծագործութեան լեզուում²:

Արիստակէս Լաստիվերցու «Պատմութեան» գրաբար բնագիրը, շնորհիւ լեզուական բարձր ոճի, հարուստ է նորաբանութիւններով ու նորայայտ բառերով: Ուսումնասիրելով Արիստակէս Լաստիվերցու երկի նորակազմութիւնները՝ դրանք խմբաւորել ենք աւանդական սկզբունքով:

ա) Մխիթարեան հայրեր Գ. Աւետիքեանի, Խ. Սիրմէլեանի եւ Մ. Ազեբեանի «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի»-ում (այսուհետեւ՝ ՆՀԲ) եւ Լ. Յովհաննիսեանի «Գրաբարի բառարան. ՆՀԲ-ում չվկայուած բառեր» աշխատանքում չընդգրկուած նոր բառեր,

բ) վերոյիշեալ բառարաններում վկայուած նոր բառեր, որոնց համար որպէս սկզբնաղբիւր նշուած է Արիստակէս Լաստիվերցու «Պատմութիւնը»:

Մեր հետազոտութեան ընթացքում գտել ենք բառարաններում չվկայուած 38 նորագիւտ բառ, իսկ 13 բառ ՆՀԲ-ում բերուած են միայն Լաստիվերցու օրնակներով: Ուսումնասիրած բառերի շարքերում առանձնացրել ենք նաեւ այնպիսի միաւորներ, որոնք թէեւ կան ՆՀԲ-ում կամ Լ. Յովհաննիսեանի բառարանում, սակայն «Պատմութեան» մէջ կիրառուել են նոր նշանակութիւններով: Սրանք այն բառերն են, որոնք հայերէնում ունեցած հանրայայտ իմաստից բացի՝ նոր բովանդակութեամբ են կիրառուել «Պատմութեան» մէջ: Օրինակները ներկայացնում ենք ՆՀԲ-ի եւ արդի հայերէնի բացատրական բառարանների զուգադրահամեմատութեամբ՝

1. **Կորակնել** (էջ 530) բառը ՆՀԲ-ում վկայուած է «Զակն՝ ի վայր կորացուցանել, լի լինել ամօթով»³ իմաստով: Արիստակէս Լաստիվերցու գրքում այս բառի կիրառութեանն ենք հանդիպել հետեւեալ արտայայտութիւններում. «Ի սոցա վարդապետական հանդիսիցս **կորակնեալք**: Յորոց բանից ամենայն փաղանգդ հերձուածողն կորակընեալք», «կորակնեալք իբրեւ զմկունս ի ծակս»: Ըստ մեր դիտարկման՝ Լաստիվերցու գրուածքում բառը նշանակում է «սողոսկել»: Ստ. Մալխասեանցի «Հայերէն բացատրական բառարանում» այս բառը կայ՝ հիմնական իմաստով «աչքը ներքեւ խոնարհեցնել, ակնկորել», իսկ փոխաբերական իմաստով՝ «ամօթահար լինել»⁴: Էդ. Աղայեանի «Արդի հայերէնի բացատրական բառարանում» բառը նշուած է «հագուողէպ» նշմամբ եւ ունի «աչքերը խոնարհել, ամօթահար լինել»⁵ իմաստները: Աշխարհաբար թարգմանութեան մէջ թարգմանիչը «կորակնել» բառը թարգմանել է «սողոսկել», ինչի հետ լիովին համաձայն ենք, քանի որ այստեղ բառն ունի փոխաբերական կիրառութիւն, որն համապատասխան է «սողոսկել» իմաստին:

2. **Հերթթանք** բառը ՆՀԲ-ում վկայուած է «հայթայթանք»⁶ իմաստով: Արիստակէս

² Ա. Ս. Մարգարեան, Ժամանակակից հայոց լեզու, բառագիտութիւն, Երեւան, 1993, էջ 209-213:

³ Հ. Գ. Աւետիքեան, Հ. Խ. Սիրմէլեան, Հ. Մ. Ազեբեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հատ. Ա., Վենետիկ, 1836, էջ 1118:

⁴ Ս. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, Հատ. Բ., Երեւան, 1944, էջ 476:

⁵ Է. Բ. Աղայեան, Արդի հայերէնի բացատրական բառարան, Հատ. Ա., Երեւան, 1976, էջ 761:

⁶ Հ. Գ. Աւետիքեան, Հ. Խ. Սիրմէլեան, Հ. Մ. Ազեբեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հատ. Բ., Վենետիկ, 1837, էջ 81:

Լաստիվերցու գրքում այս բառի կիրառությունն ենք հանդիպել հետեւեալ նախադասություններում: «Ընդ բազում **հեթեթանք** եւ ընդ ցնորիւք անկան ազգ մարդկան»:⁷ Ստ. Մալխասեանցի «Հայերէն բացատրական բառարանում» եւս այս բառը ներկայացւած է «հայթայթանք» նշանակութեամբ, բայց որպէս համանուն ունենում է նաեւ «հեթեթալը»⁸ իմաստը: Էդ. Աղայեանի «Արդի հայերէնի բացատրական բառարանում» բառն ունի միայն «հեթեթալը, հեթեթալու ձայնը»⁹ իմաստները՝ կորցնելով «հնարք» իմաստը: Թարգմանիչը աշխարհաբարում պահպանել է «հեթեթանք» ձեւը: Այստեղ պատշաճ է հին ձեւի կիրառութիւնը, քանի որ բառը չպահպանելու դէպքում կ'ունենային ոճի պարզամտութիւն:

3. **Աշխարհահայեաց** բառը նշձ-ում վկայուած է «որ հայի ի վերայ աշխարհիս»՝ «աշխարհին նայող աչք» իմաստով: Բերելով Լաստիվերցու «աշխարհահայեաց տարր» արտայայտութիւնն՝ իբրեւ օրինակ, նշձ-ում նշուած է, որ այդ տարրը Արեգակն է¹⁰: Ստ. Մալխասեանցի «Հայերէն բացատրական բառարանում» այս բառը բացատրուած է «աշխարհի վրայ նայող» իմաստով՝ որպէս ածական¹⁰: Էդ. Աղայեանի «Արդի հայերէնի բացատրական բառարանում» բառն արդէն չկայ: Նրա փոխարէն վկայում է «աշխարհահայեացք» բառը՝ «աշխարհայեացք» իմաստով¹¹: Երկի աշխարհաբար տարբերակում թարգմանիչը օգտագործել է աշխարհայեաց ածականը, որը համանման կազմութիւն է՝ գոյն+բայարմատ, իմաստը ենթակայական դերբայով է արտայայտուած՝ «աշխարհին հայող»:

Այսպիսով՝ կարող ենք եւս մէկ անգամ փաստել, որ լեզուի զարգացման տարբեր փուլերում բառերը ենթարկուել են նաեւ իմաստաբանական տարբեր փոփոխութիւնների:

«Պատմութեան» գլխաւոր բառային հարստութիւնը նշձ-ում եւ Լ. Յովհաննիսեանի բառարանում չվկայուած նորակազմութիւններն են. մեր հաշուարկով դրանք 38-ն են: Դրանցից 18-ը գոյականներ են, 12-ը՝ ածական, 5-ը՝ բայ, 3-ը՝ մակբայ: Երկի գրաբարեան թարգմանութեան մէջ տեղ գտած նորակազմութիւնները բնութագրենք՝ ըստ բառակազմական առանձնատկութիւնների.

ա) պարզ ածանցաւոր՝ **հարկետր** (էջ 534) (աշխարհաբարում՝ յարգարժան), **խարդախան** (էջ 612) (աշխարհաբար թարգմանութեան մէջ՝ խարդախութիւն), կամ տարբեր արմատներով ու յօդակապով կազմուած բարդ ածականներ՝ **յեղակարծ** (էջ 537) թարգմանութեան մէջ՝ անսպասելի),

բ) **եալ-ով** անցեալ դերբայի նորակազմ ձեւեր՝ **աղէխարշեալ** (էջ 558) (թարգմանութեան մէջ՝ տոշորուն գեղեցիկ բառն է օգտագործել Վազգէն Գէորգեանը),

գ) **ուրթիւն** վերջածանցով կազմուած վերացական գոյականներ՝ **դայիսուրթիւն** (էջ 552) (թարգմանութեան մէջ՝ դայոսութիւն), **ազնականուրթիւն** (էջ 599) (թարգմանութեան մէջ՝ օգնութեան համար),

դ) **բար, պէս** ածանցներով ձեւի մակբայներ՝ **զանխլաբար** (էջ 537) (թարգմա-

⁷ Ս. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, Հատ. Գ., Երեւան, 1944, էջ 88:

⁸ Է. Բ. Աղայեան, Արդի հայերէնի բացատրական բառարան, Հատ. Ա., Երեւան, 1976, էջ 853:

⁹ Հ. Գ. Անտիքեան, Հ. Խ. Սիւրմէլեան, Հ. Մ. Ազեքեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հատ. Ա., Վենետիկ, 1836, էջ 262:

¹⁰ Ս. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, Հատ. Ա., Երեւան, 1944, էջ 195:

¹¹ Է. Բ. Աղայեան, Արդի հայերէնի բացատրական բառարան, Հատ. Ա., Երեւան, 1976, էջ 90:

նութեան մէջ՝ ծածուկ), **ասննիմաստապէս** (էջ 553) (աշխարհաբար տարբերակում բառի իմաստն արտայայտում է կապական կառոյցով՝ ամենաիմաստուն կերպով),

ե) **նորակազմ բայեր՝ ախտակցել** (էջ 564) (թարգմանութեան մէջ՝ ախտակից լինել), **մարմանջել** (էջ 570) (թարգմանութիւն՝ սաստիկ կսկիծ զգալ),

զ) **վերջածանցաւոր գոյականներ՝ կրաւնաստան** (էջ 530) (աշխարհաբար տարբերակում՝ մենաստան), **կոմիւնիտացի** (էջ 532) (աշխարհաբար տարբերակում՝ նիկոմիդացի),

է) տարբեր արմատների եւ ածանցների զուգակցմամբ ստեղծուած **բարդ եւ բարդածանցաւոր բառեր՝ այսպիսաւրէն** (էջ 580) (թարգմանիչը բնագրի «եւ այսպիսաւրէն գործովք սպառեցաւ քաղաքն յարանց» հատուածը թարգմանել է «քաղաքը զրկուեց մարդկանցից»՝ սղագրելով արտայայտուող միտքը), **հետամուտ** (էջ 551) (թարգմանելիս կիրառելով յետամուտ ձեւ՝ Գէորգեանը պահպանում է նորաբանութիւնը՝ հետեւող իմաստով), **արագնաց** (էջ 539) (աշխարհաբարում՝ օրուայ), **յորձեռանդ** (էջ 601) (աշխարհաբարում՝ յորդահոս), **աւտարաշխարհիկ** (էջ 567) (թարգմանութեան մէջ՝ տարաշխարհիկ):

«Պատմութեան» մէջ աւելի քիչ թիւ են կազմում այն նոր բառերը, որոնք թէեւ ամբողջութեամբ են ՆՀԲ-ի բառարանագիրների կողմից, սակայն դրանց համար որպէս միակ սկզբնաղբիւր նշում է Արիստակէս Լաստիվերցին: Մենք առանձնացրել ենք այդպիսի 13 նորակազմութիւն: Խօսքիմասային պատկանելութեամբ դասակարգելիս կ'ունենանք հետեւեալ պատկերը՝

գոյական՝ լուսարան (էջ 534) (բնագրի «զլուսարանս խաւարեցուցին» արտայայտութիւնը թարգմանիչը պարզեցրել է, դարձրել «աչքերը հանեցին», զրկել պատկերաւորութիւնից), **ժիժման** (էջ 606) (թարգմանութեան մէջ՝ ժժմակ), **աղուեսագրող** (էջ 614) (թարգմանութեան մէջ՝ աղուէսանկար դրող),

ածական՝ արքունաշէն (էջ 533) (թարգմանութեան մէջ՝ արքունաշէն), **բարձրածեղուն** (էջ 533) (թարգմանութեան մէջ՝ բարձրաբերձ), **արքունագրող** (էջ 534) (թարգմանութեան մէջ՝ աստուածագրող),

մակբայ՝ անիրաւապէս (էջ 548) (թարգմանութեան մէջ՝ անարդար):

Ուսումնասիրելով Արիստակէս Լաստիվերցու «Պատմութեան» նորակազմ բառերը՝ յանգում ենք այն եզրակացութեան, որ դրանք, թէեւ մեծաթիւ չեն, սակայն ստեղծուած են բառակերտման ու բառաստեղծման հայկաբան բանաձեւերով ու կաղապարներով: Ի տարբերութիւն գրաբար բնագրի՝ աշխարհաբար թարգմանութիւնը, մեր համոզմամբ, առաւել պարզ է, հիմնականում չեն պահպանուել հեղինակի նորակազմութիւններն ու բարձր ոճը: Թարգմանիչը օգտագործում է ընդհանուր համագործակցական բառեր, ոչ միշտ եւ ամբողջական արտայայտում Լաստիվերցու կերտած բառերի բովանդակային լիցքերը: Լաստիվերցին պերճաբան է, թարգմանիչը՝ հատու, համառօտասէր:

Գրաբարեան դարձուածքներն ու յարադրութիւնները արդի արեւելահայերէն թարգմանութեան մէջ հանդէս են գալիս մի շարք իւրայատկութիւններով: Յիշենք, որ դարձուածքը բառերի կայուն, պատրաստի վերարտադրելի, վերաիմաստաւորուած կապակցութիւն է, ուր բաղադրիչ բառերի ինքնուրոյնութիւնը ձեւական է, շարահիւ-

սական կապը՝ մթազնած¹²: Որպես լեզուական երեւոյթ, դարձուածը յատուկ է գրեթէ բոլոր լեզուներին, բայց իւրաքանչիւր լեզուում այն ունի իր առանձին, միայն տուեալ լեզուին յատուկ դրսեւորումն ու ձեւաւորումը:

Կատարելով Արիստակէս Լաստիվերցու «Պատմութեան» դարձուածքների իմաստականութեան լեզուաբանական քննութիւնը եւ վիճակագրական ամփոփ նկարագրութիւնը՝ դարձուածային միաւորները հետազօտել ենք գիտական նկարագրութեան, համեմատութեան եւ վերականգնման մեթոտների կիրառմամբ: «Պատմութեան» դարձուածային միաւորները քննել ենք նախ ըստ բաղադրիչների քանակի, ապա՝ ըստ գերադասանդամի իմաստային բովանդակութեան: Աշխատութիւնից դուրս ենք գրել մօտ 120 դարձուածք եւ դարձուածային արտայայտութիւն: Վերլուծելով «Պատմութիւն» երկի դարձուածքներն ըստ բաղադրիչների քանակի՝ նկատեցինք, որ այստեղ գերակշռում են երկանդամ եւ եռանդամ դարձուածքները: Բերենք դարձուածքների օրինակներ՝ մեր եւ թարգմանչի թարգմանութիւններով՝ նշելով, որ նախդիրները եւս համարել ենք առանձին բաղադրիչներ:

Երկանդամ անուանական դարձուածքներ՝ **դառնութիւն արկածիցն** (էջ 541)՝ չար արկած (թարգմանութեան մէջ՝ դաժան փորձութիւն), **լուսոյն ընդունարան** (էջ 606)՝ տկարամտութիւն (Գէորգեանը հէնց այսպէս էլ թարգմանել է՝ լոյսի ընդունարան՝ չըպահպանելով բառակապակցութեան փոխաբերական իմաստը):

Երկանդամ բայական դարձուածքներ՝ **ախորժել զջուրն** (էջ 528)՝ բարեկամանալ (թարգմանիչը այս արտայայտութիւնը զրկել է փոխաբերական իմաստից եւ թարգմանել չհաւանել ջուրը), **ահաբեկ լինել** (էջ 565)՝ սարսափահար լինել (թարգմանութեան մէջ՝ սաստիկ ահաբեկուած):

Եռանդամ դարձուածքներ՝ **ընդ կրունկն դառնալ** (էջ 533)՝ կրնկակոխ փախչել (թարգմանիչը այս դարձուածքն արտայայտում է ետ ընկնել իմաստով, ինչը, կարծում ենք, հասարակաբան է), **ի բարկութիւն բրդել** (էջ 532)՝ ցասմամբ ուղղորդուել (թարգմանութեան մէջ՝ բարկանալ, ինչը շատ պարզեցուած է), **կալ ի հնազանդութիւն** (540)՝ հնազանդուել (թարգմանութեան մէջ՝ հնազանդ մնալ), **պարապեալ ի գործոյ** (էջ 547)՝ անգործութեամբ զբաղուել (թարգմանութեան մէջ՝ գործը վերջացնել):

Քառանդամ դարձուածքներ՝ **եղջիւր փրկութեան եւ յուսոյ** (էջ 627)՝ Աստուած (այս դարձուածքը թարգմանուած չէ), **փառք դառնալ յապականութիւն** (էջ 527)՝ անպատիւ փառագրկուել (թարգմանութեան մէջ բացակայում է այս տողը):

Հնգաբաղադրիչ դարձուածքներ՝ **ընդդէմ արեւու ի խայտառական անկանել** (էջ 534)՝ օրը ցերեկով անբարոյականութիւն անել (թարգմանիչը դարձուածքի միտքն արտայայտել է հետեւեալ կերպ՝ արեւի դէմ անպատկառ կերպով խայտառակուել), **խորհորդ վատ ի մէջ առնել** (էջ 536)՝ վատ խորհուրդ ստանալ (թարգմանութեան մէջ՝ չար խորհուրդ անել):

Մէկ վեցանդամ դարձուածք՝ **կորակնեալք իբրեւ զմկունս ի ծակս** (էջ 530)՝ մկան պէս սողոսկել (թարգմանութեան մէջ եւս տրուած է մկների նման սողոսկել իմաստը): Արիստակէս Լաստիվերցու «Պատմութիւն» երկից առանձնացուած ԴՄ-ները բնութագրենք նաեւ ըստ իմաստային դաշտերի՝ հաշուի առնելով դրանց գերակայ բաղադրիչի իմաստային բովանդակութիւնը եւ արտայայտուող ընդհանուր նշանակութիւնը: Գե-

¹² Հմմտ. Խ. Բաղիկեան, «Ժամանակակից հայերէնի դարձուածային միաւորները», Երեւան, 1986, Խ. Բաղիկեան, «Դարձուածային ռեպրեզենտացիան», Երեւան, 2000:

րակայում են հետեւեալ իմաստային դաշտերին պատկանող միաւորներից կազմուած կառոյցները՝

ա) Մարմնամասեր նշանակող բառերից ստեղծուած ԴՄ-ներ՝ **ձեռամբ առնել** (էջ 529) (թարգմանութեան մէջ՝ ձեռքի տակ գցել՝ ձեռք գցել իմաստով), **ի բերան առնուլ** (էջ 550) (թարգմանութեան մէջ՝ բերանն առած՝ անդադար կրկնելու իմաստով, **ընդ կրունկն դառնալ** (էջ 533)՝ (թարգմանութեան մէջ՝ ետ մնալ):

բ) Ֆիզիքական գործողութիւններ արտայայտող բառերից կազմուած ԴՄ-ներ՝ **արկանել ի սիրտ** (էջ 628) (թարգմանուել է սիրտը ձգել՝ սիրտը գցել իմաստով), **դժկամակ լինել** (էջ 591) (թարգմանութեան մէջ՝ դժկամութեամբ վերաբերուել), **թափել զգիւնի** (էջ 537) (Գէորգեանը, պահպանելով փոխաբերական իմաստը, թարգմանել է սթափուել գինարբութիւնից):

գ) Միտք եւ խօսք նշանակող բառերից կազմուած ԴՄ-ներ՝ **բարբառել բանս** (էջ 567) (թարգմանիչը օգտագործել է բառի եզակի թիւը՝ խօսքն ասել), **խակոյթին մտաց** (էջ 561) (թարգմանութեան մէջ՝ խակամտութիւն):

դ) Շարժում, տեղափոխութիւն, փոխադրում նշանակող բառերից ստեղծուած ԴՄ-ներ՝ **ի բաց առնալ** (էջ 534) (թարգմանութեան մէջ վեր առնել՝ հանած, բացած իմաստով), **ի փախուստ դարձուցին** (էջ 529) (թարգմանութեան մէջ՝ փախուստի մատնել):

ե) Տեղ, վայր նշանակող բառերից կազմուած ԴՄ-ներ՝ **լուսոյն ընդունարան** (էջ 606) (աշխարհաբար թարգմանութեան մէջ՝ լոյսի ընդունարան):

Աշխարհաբար թարգմանութեան մէջ առկայ են մի շարք դարձուածքների չեզոքացում, փոխարինում մէկ բառով կամ պատկերների ընդհանուր պարզեցում: Թարգմանութիւնն ինքնին շատ սեղմ է, պերճաբառ չէ: Բաց են թողնուած մի շարք դարձուածներ ու յարադրութիւններ: Դարձուածային որոշ արտայայտութիւններ փոխարինւած են յարադիր կապակցութիւններով: Արտայայտչամիջոցները եւս համարժէք պահպանուած չեն: Մեր համոզմամբ՝ թարգմանիչը չի հետեւել հեղինակի կիրառած պատկերաւորման բարձր ոճին ու խօսքի բազմերանգութեանը: Կիրառելով ընդհանուր բառապաշարային բառեր՝ ստեղծագործութեան շարադրանքը դարձրել է դիւրընկալ ու պարզաշունչ: Այսինքն՝ Արիստակէս Լաստիվերցու այս երկը՝ «Պատմութիւն» աշխատութիւնը, մեր ըմբռնմամբ, կարիք ունի նոր ու խորաքնին թարգմանութեան, հեղինակի ոճի վերականգնման:

ՎԱՐԴՈՒՏԻ ԲԱՐՍԵՂԵԱՆ

ԵՊՀ Հայ բանասիրութեան ֆակուլտետի Հայոց լեզուի պատմութեան եւ ընդհանուր լեզուաբանութեան ամպիոնի մագիստրոս